04.04.22 8

«ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵԲԿԳՀԱՊՁԲ22-8

ք. Եղեգնաձոր «18»Մարտի 2022 թ.

«Եղեգնաձորի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ը ի դեմս տնօրեն Կարեն Ասատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Վիոլա» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Մեժլումյանի, որը գործում է «Վիոլա» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիր2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում. բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը: 2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:
2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:
2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:
2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:
2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:
2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:
2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:
2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:2.4.11 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և/ կամ արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը: Պայմանագիրը կատարել սույն պայմանագրի հավելված N 1.1 ով հաստատված աշխատակիցների և հայաստանյան ծագում ունեցող ապրանքների մատակարարման միջոցով :

2⍰4⍰12 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1Պայմանագրի գինը կազմում է **35400** (երեսունհինգ հազար չորս հարյուր)ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը: 3"3 Սույն պայմանագրի 2.4.11 և 2.4.12 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով վաճառողին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

---

[18] Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[23]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[24] 8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:
[23] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*
[24] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[25]

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
« Եղեգնաձորի բժշկական կենտրոն » ՓԲԸ	«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
Վայոց ձորի մարզ ք. Եղեգնաձոր	ք. Երևան, Նոր Նորք, Գյուրջյան փ. 17շ. 91 տ.
Վայքի փ. 1	«Ամերիա բանկ» ՓԲԸ
Բանկ՝ «Յունիբանկ»ՓԲԸ	Հ/Հ 1570001092880100
Հ/Հ 24113002340100	ՀՎՀՀ 00801026
ՀՎՀՀ 08909438	Տնօրեն՝ Ա. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ
Տնօրեն՝ Կարեն Ավետրյան	
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«18 » 03 .2022 թ. կնքված
«ԵԲԿԳՀԱՊՁԲ22-8» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի											
չափաբաժնի համարը	ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գին/ՀՀ դրամ	ընդհանուր գին/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
17	33211230/502	ՌՊՌ կ ար բ ո ն	Bio Lab Diagnostics LtdR.P.R	սիֆիլիսի որոշման թեստ հավաքածու	հ ատ	78,67	35400	450	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք.Եղեգնաձոր Վայքի փ 1 «Եղեգնաձորի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի հասցեով	Համաձայն պատվերի: Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել	Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/, մյուս փուլերի դեպքում յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացում Մինչև 30.12.2022թ

* Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա : *Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել:
*Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ՀՀ, Վայոց ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, Վայքի փ 1, «Եղեգնաձորի բժշկական կենտրոն»ՓԲԸ հասցեով, աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին՝ 09:00-17:00:
*Ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է Պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Գնորդից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:
*Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը պետք է ներկայացնի նաև առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվություն:*Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը ա. 2,5 տարի և ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 12 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,* Որակի սերտիֆիկատների առկայություն * Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:** Եթե ընտրված մասնակցի հայտով ներկայացվել է մեկից ավելի արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշ ունեցող ապրանքներ, ապա դրանցից բավարար գնահատվածները ներառվում են սույն հավելվածում: Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը::Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
« Եղեգնաձորի բժշկական կենտրոն » ՓԲԸ	«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
Վայոց ձորի մարզ ք. Եղեգնաձոր	ք. Երևան, Նոր Նորք, Գյուրջյան փ. 17շ. 91 տ.
Վայքի փ. 1	«Ամերիա բանկ» ՓԲԸ
Բանկ՝ «Յունիբանկ»ՓԲԸ	Հ/Հ 1570001092880100
Հ/Հ 24113002340100	ՀՎՀՀ 00801026
ՀՎՀՀ 08909438	Տնօրեն՝ Ա. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ
Տնօրեն՝ Կարեն Ասատրյան	
------------------------------- /ստորագրություն/ Կ.Տ	------------------------------- /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
« 18» 03 .2022 թ. կնքված
ԵԲԿԳՀԱՊՁԲ22-8 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
17	*33211230/502*	ՌՊՌ կ ար բ ո ն			10620	12390	14160	17700	21240	24780	28320	30090	31860	35400	35400	

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ
« Եղեգնաձորի բժշկական կենտրոն » ՓԲԸ
Վայոց ձորի մարզ ք. Եղեգնաձոր
Վայքի փ. 1
Բանկ՝ «Յունիբանկ»ՓԲԸ
Հ/Հ 24113002340100
ՀՎՀՀ 08969438
Տնօրեն Կարեն Կարապետյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք, Գյուրջյան փ. 17շ. 91 տ.
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 00801026
Տնօրեն՝ Ա. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ
_____
/ստորագրություն/
Կ.Տ

Համաձայնագիր N 1

«Եղեգնաձորի բժշկական կենտորն» ՓԲԸ-ի և «ՎԻՈԼԱ» ՍՊԸ-ի միջև 2022թ-ի Մարտի 18-ին կնքված դեղարայքի ձեռք բերման N «ԵԲԿԳՀԱՊՁԲ22-8 » պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին

Ք.Երևան 18 մարտի 2022թ

«Եղեգնաձորի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Ասատրյանի, որը գործում է «Կանոնադրության» հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից և «ՎԻՈԼԱ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ա. Մեժլումյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից (երկուսը միասին կհիշատակվեն որպես Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև 2022 թ-ի մարտի 18-ին կնքված N« ԵԲԿԳՀԱՊՁԲ22-8 » պայմանագրի 8.1 և 8.15 կետերը, ինչպես նաև հաշվի առնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու հանգամանքը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին հաստատել Պայմանագրի ապրանքների ձեռքբերման գնման և ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը(կցվում է):

2. Այլ պայմաններ

2.1.Համաձայնագիրնուժիմեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

2.2.Համաձայնագրումչնշված՝Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3.Համաձայնագիրըկազմվածէ 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածը հադիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
«Եղեգնաձորի բժշկական կենտրոն»ՓԲԸ	«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Եղեգնաձոր,Վայքի 1	ք. Երևան, Նոր Նորք, Գյուրջյան փ. 17շ. 91 տ.
Բանկ՝ Յունի բանկ ՓԲԸ Եղեգնաձորի մ/ճ	«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 24113002340100	Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 08909438	ՀՎՀՀ 00801026
Տնօրեն՝ Կ. Ասատրյան	Տնօրեն՝ Ա. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված
18 մարտի 2022թ. կնքված
N ԵԲԿԳՀԱՊՁԲ22-8*ծածկագրով գնման պայմանագրի N 1 Համաձայնագրի*

ԲԺՇԿԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախատեսվում է գնել 2022 թվականի ընթացքում	
Գնմանժամանակացույց Մատակարարմանժամկետըևվայրը	ՅուրաքանչյուրանգամՊատվիրատուիցպատվերըստանալուցհետո 5աշխատանքայինօրվաընթացում: Ապրանքներիտեղափոխումը, իրականացնումէմատակարարը, Հասցեն՝ Վայոց ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, Վայքի 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքիանվանումը	Նախատեսվում է վճարել համաձայնՀՀգնումներիմասինօրենքի 15-րդհոդվածի 6-րդկետի՝ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից սկսված 2022թ. ընթացքում												
	01	02	03	04	05	06	07	08	09	10	11	12	ընդամենը
ՌՊՌ կարբոն			10620	12390	14160	17700	21240	24780	28320	30090	31860	35400	35400

** Վճարմանենթակագումարներըներկայացվածենաճողականկարգով*
**Մատակարարմանվայրը՝ Վայոց ձորի մարզ. Ք. Եղեգնաձոր, Վայքի 1, աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին 9:00-17:00

ԳՆՈՐԴ
«Եղեգնաձորի բժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ք. Եղեգնաձոր,Վայքի 1
Բանկ՝ Յունի բանկ ՓԲԸ Եղեգնաձորի մ/ճ
Հ/Հ 24113002340100
ՀՎՀՀ 08909438
Տնօրեն՝ Կ. Ասատրյան

/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ
«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք, Գյուրջյան փ. 17շ. 91 տ.
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 00801026
Տնօրեն՝ Ա. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

/ստորագրություն/